ԿԱՐԾԻՔ

Գայանե Սերգեյի Հարությունյանի «Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց» խորագրով ատենախոսության մասին. ԺԳ.00.02 – «Դասավանդման և ուսուցման մեթոդիկա» (երաժշտություն) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Գայանե Հարությունյանի «Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց» ատենախոսական աշխատանքն իրականացված է արդիական թեմայով և ավարտուն ինքնուրույն բազմամյա հետազոտություն է:

Հետազոտության թեմայի արդիականությունն ընդգծվում է ոչ միայն ժամանակակից նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման խնդրի մշակման և աճող սերնդի գեղարվեստական կրթության կարևորությամբ, այլ նաև այս խնդիրների առնչությամբ, հատկապես հայկական սփյուռքում՝ ավելի մասնակի՝ Բեյրութի Ազգային Եղիշէ Մանուկյան քոլեջի «Սիրան Մանուկյան» մանկապարտեզի նյութական հենքով խորը մենագրական հետազոտությունների բացակայությամբ:

Այս իմաստով Գայանե Հարությունյանի ատենախոսությունը ժամանակի պահանջի արգասիքն է, որի նպատակն է նախադպրոցականների ազգային ինքնության զարգացման առանձնահատկությունների բացահայտումն ու մանկավարժական պայմանների մշակումը:

Գրախոսվող աշխատանքը գրված է տրամաբանորեն ծրագրավորված պլանով և իր մեջ ընդգրկում է խորը գիտական հիմախնդրի մշակում՝ ունենալով կարևոր գեղարվեստամշակութային նշանակություն:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք մասից, եզրահանգումից, մատենագիտական ցանկից, հավելվածից:

Ներածական մասում պատճառաբանված է հետազոտության, խնդրի արդիականությունը, բանաձևվում են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը,

խնդիրները, հետազոտության գիտական ենթադրությունը և հետազոտման ձևաչափությունը, նրա գիտական նորույթը, տեսաբանական ու գործնական արժեքը, պաշտպանության ենթակա դրույթները:

Հանգամանորեն մշակվել է տեսական և փորձառական մեթոդիկան, որը թույլ է տվել խորը և արդյունավետ լուծելու առաջադրված բոլոր խնդիրները:

Հեղինակը նախադպրոցական տարիքի երեխաների /սփյուռքի/ ազգային ինքնության զարգացման խնդրի լուծման մեջ կանորում է մանկավարժական պայմանների բովանդակությունը, ձևերն ու մեթոդները, որոնք համապատասխանում են ժամանակակից գիտական պահանջներին, մեթոդներին, կրթական վերափոխումներին և ապահովում են շրջապատող աշխարհի վերաբերյալ մշակութային պահանջմունքներ:

Ատենախոսության առաջին մասը նվիրված է նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման խնդրում հայկական երաժշտության ուսումնասիրման տեսաբանական հիմնավորմանը, գեղարվեստական դաստիարակության հասկացությունների ու սկզբունքների որոշարկմանը, սփյուռքի հայ երեխաների ազգային ինքնության զարգացման գործընթացում հայկական երաժշտության դերին:

Աշխատության երկրորդ մասում դիտարկվում է երաժշտության գիտատեսաբանական հիմքերը՝ որպես ուսումնական առարկայի, տեսաբանորեն հիմնավորվում է երաժշտական գործունեության ընթացքի մեջ նախադպրոցականների ազգային ինքնության զարգացման ուղղորդման գործընթացը, բացահայտվում են հայկական մանկական կենտրոններում երեխաների գեղարվեստական կրթության հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները: Այնուհետև բացահայտվում են հայկական երաժշտության փորձարարական ուսուցման ձևաչափությունն ու գիտական հիմունքները սփյուռքահայ նախադպրոցական կառույցներում:

Ատենախոսության երրորդ գլխում բացահայտվում է նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման ձևաչափությունն ու բովանդակությունը Բեյրութի Ազգային Եղիշէ Մանուկյան քոլեջի Սիրան Մանուկյան մանկապարտեզի օրինակով:

Եզրահանգման մեջ բերվում են հետազոտության հիմնական հետևությունները:

Հավելվածում ներկայացված են փորձարարական ծրագրով անցկացրած ուսումնական ողջ ընթացքը և արդյունքների հրապարակումը:

Ատենախոսական հետազոտության արդյունքում լուծված են առաջադրված բոլոր խնդիրները, հաստատված է գիտական ենթադրությունը:

Գայանե Հարությունյանի գիտական նորույթն ու տեսաբանական արժեքն ամփոփվում է հայկական երաժշտության առանձնահատուկ դրսևորմամբ՝ - որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման յուրահատուկ ձև, որպես աճող սերնդի հայեցի դաստիարակության միջոց:

Անցկացված տեսագործնական վերլուծությունների արդյունքում լուծված են առաջադրված բոլոր խնդիրները: Ավելի հստակ՝

— Վերլուծվել է Հայ երաժշտամանկավարժական մտքի զարգացման նախադրյալները
— Քննարկվել է նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության և երաժշտական ընդունակությունների զարգացման տեսամեթոդաբանական հիմքերը
— Մշակված և փորձարկված են նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման մեթոդական ապահովումն ու դրա փորձարարական հիմնավորումը:

Ատենախոսության մեջ ներկայացված են բազմամյա փորձի արդյունքները՝ տեքստային նյութին զուգահեռ ակնառու նյութ-աղյուսակներ, գծապատկերներ, որոնց համալիրը համոզիչ կերպով հաստատում է առաջ քաշված գիտական դրույթների ճշմարտացիությունը, հաստատում վարկածի հիմնական ուղղվածությունը, ակնառու պատկերում գիտափորձի ելքը և նրա հիմնական արդյունքները:

Հատկապես հարկավոր է նշել, որ ատենախոսի կատարած գիտափորձը և խորը տեսագործնական վերլուծությունը հնարավորություն է տվել հաստատելու մի շարք գիտական փաստեր, որոնք նկատելի փոխում են ուսումնադաստիարակչական գործընթացը նախադպրոցական կառույցներում:

Աշխատանքի ընդհանուր արժանիքներից պետք է նշել այն հանգամանքը, որ այն ավարտուն, ամբողջական և ժամանակակից հնչողություն ունեցող հետազոտություն է, որում դրսևորված են հեղինակի ինչպես տեսական, մեթոդաբանական, այնպես էլ հոգեբանամանկավարժական գիտելիքները:

Վերը թվարկածի կողքին կարելի է նշել որոշ բացթողումներ, որոնք օբյեկտիվորեն առնչվում են ատենախոսությանը:

1. Գիտական ապարատում /ներածությունում/ սահմանումները պետք է լինեն ամփոփ, հստակ ձևակերպված՝

   ա. Գիտական նորույթում՝ ներառել հիմնական ձևակերպումները (1-3 կետերի սահմաններում)

   բ. եզրակացության մեջ հետևությունները պետք է համապատասխանեն գիտական նորույթի, խնդիրների, վարկածի և դրույթների հետ:

2. Ատենախոսության շարադրանքում ներառնված են հեղինակներ, որոնք բացակայում են գրականության ցանկում /131 էջում՝ Հարությունյան Գ. №58, 122-ում Выгодский, 64 էջում Միշորի, Տեպլովի, Ցիպինի անունները, շարադրանքում ցիտված է Մ. Կազինիկին, գրականության ցանկում բացակայում է: . . .և այլն/

3. Ատենախոսության ծավալը գերազանցած է թեկնածուական հետազոտական աշխատանքին վերագրվող չափանիշից՝ /125-130 էջ/, սոյն ատենախոսության ծավալը 175 էջ է:

— Խուսափելու համար կարելի էր կրճատել II- 1 ենթագլուխը-30 էջ է և III- 2-ը-42 էջ է:

4. Ատենախոսության հավելվածը՝ 105 էջ, պետք է առանձնացվի և էջանշվի առանձին, չունենալով ընդհանրություն աշխատության շարադրանքի հետ:

5. Գրական ցանկը շատ ծավալուն է ներկայացված՝ 175 անուն, որից ցիտված է 58-ը՝ 1/3-ը, անհրաժեշտ է բեռնաթափել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Նկատի ունենալով Գայանե Սերգեյի Հարությունյանի «Երաժշտությունը որպես նախադպրոցական տարիքի երեխաների ազգային ինքնության զարգացման միջոց» խորագրով ատենախոսության ամբողջականությունը /արդիականությունը, նպատակը, խնդիրները/, որը բավարարում է ՀՀ ԲԿԳԿ-ի №7 կետի պահանջներին, միջնորդվում է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական աստիճաններ շնորհող 020 մասնագիտական խորհրդի առջև, նրա հեղինակին՝ Գայանե Սերգեյի Հարությունյանին շնորհելու իր հայցած՝ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը:

Պաշտոնական ընդդիմախոս մանկ. գիտութ. դոկտոր, պրոֆեսոր
ՌԴ ԿԱ ակադեմիկոս
ՀՀ արվեստի վաստ. գործիչ

Լ.Ս. Ներսիսյան
18.06.2024.

Պրոֆ.Լ.Ս. Ներսիսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտաքարտուղար,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ

Մ. Մ. Իսպիրյան